

ազտառուեցան։ Մեծ գժուարութեամբ տարան հիւանդ Կօնտին մօտակալ հիւրանոցը։

Սակայն Կօնտը առողջացաւ։ 1819 թրւի սկզբում նա վերսկսեց դասախոսութիւնները։ 1830 թուին սկսեց հրատարակել իւր մեծագոյն աշխատութիւնը։ Բայց այդ հսկայական գործը նրան ոչինչ օգուտ չէր բերում։ 1832 թուին նա տեղ ստացաւ բազմարուեստեան դպրոցում 2000 ֆրանկ ռոմկով, իսկ հինգ տարուց յետոյ նոյն հիմնարկութեան մէջ ստացաւ դասաքննիչի պաշտօնը 3000 ֆրանկ ռոմկով։ Այժմ դասեր ունէր նաև մասնաւոր դպրոցներում։ Եռատեսակ զբաղմունքը վեց տարուալ ընթացքում գոնեալ 20 օր շարունակ հանգստութիւն չէին տուելի Բայց մի քանի տարուց յետոյ նա զրկուեց իւր գլխաւոր պաշտօնից (դասաքննիչի) և կրկին ընկաւ անապահով դրութեան մէջ։

Երկար ժամանակ և լամառութեամբ կռուեց Կօնտը նեղ ապրուստի գէմ։ Միայն իւր կեանքի վերջին տարիններում նա միսիթարւում էր այն մտքով՝ որ ապրուստի միջոց է ստանում, հետեւելով իւր իսկուկան կոչման։ Այդ միջոցները սահմանափակ էին, բայց նրան բաւականացնում էին։ Կօնտը միշտ ապրել էր համեստ կերպով, բայց վերջին տասն տարինները նա էլ աւելի սահմանափակեց իւր պահանջները։ Նա չէր ծխում, սուրճ չէր խում և կերտակուրի մէջ էլ մեծ ջափառութիւն էր պահպանում։ Միակ զուարճութիւնը, որ նա իրան թուլ էր տալիս, իտալական օպերան էր. բայց սրանից էլ վերջիվերջոյ հրաժարուեց։

Գոյութեան կռիւր Կօնտի կեանքի տիսուր կողմերից մէկն էր։ Բայց այժմ կը ծանօթանանք մի ուրիշ տիսրալի գծի հետ։

ԱՄՅՈՒԾՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԻԾԿԱԿԱՆ ՍԵՐ

Կօնտը բախտաւոր չէր նորնպէս սիրոյ խնդրի մէջ։ Նա ամուսնացել էր մի աղջկայ հետ, որին չէր սիրում, և որը նրան բախտաւորացնել չէր կարող։ Կարօլինան—Կօնտի

կինը—թէև արտաքոյ կարգի մտաւոր ընդունակութիւններ ունէր, բայց ոչ մի լուրջ կրթութիւն չէր ստացել։ Նա ամուսնութիւնից առաջ պթեթև կեանք էր վարում։ Կօնտի հեածանօթանալուց յետոյ մի անգամ նա հրաւիրեց Կօնտին իրեն հանրահաշուի դասեր տալու։ Երիտասարդ զորդը հանրահաշուից անցուած միասին ապրելու, յետոյ էլ ամուսնալու խընդրին։ Եւ նրանք ամուսնացան։ Բայց Կօնտը շուտով համոզուեց, որ ինքը սարսափելի սխալ է գործել։ Ահա թէ ինչ է պատմում ինքը Կօնտը ալդ մասին։

«Ես ինձ ոչ գեղեցիկ համարելով, ոչ էլ նոյն իսկ դուք բեկան, բայց և այնպէս սիրոյ կենդանի պահանջ զգալով, ընտրեցի մի կին, որը պիտի սիրէր ինձ, որպէս հետեանք այն ներքին երախտիքի, որ պալմանաւորւում է ալդ ամուսնութեան բացառիկ պալմաններով»...

Բայց Կարօլինան ուրիշ շարժառիթներ ունէր ։ Նա փառասիրական ձգտումներից ստիպուած կամենում էր գիտնական ասպարիզում առաջ գնացող ամուսին ունենալ, բայց ոչ մի բանի մէջ չէր կամենում զսպել իրան։... ուստի շուտով ծագեցին ընտանեկան տարածալնութիւնները։

Մենք աւելորդ ենք համարում կանգ առնել ալդ անքախտ ամուսնական կեանքի մանրամասնութեանց վերալ, Կաստենք միայն, որ 17 տարի տանջուելուց յետոյ Կօնտը որոշեց վերջնականապէս բաժանուել իւր կնոջից։ (Բախտի բերմունքով նրանք երեխաներ չունէին, որ գործը գժուարացնէր)։ Խնչպէս երևում է Կօնտի համբերութիւնն այլ ևս հատել էր, որ երեւում է նրա սեփական խօսքերից։ Ենրկար ժամանակ — գրում է նա իւր կնոջը — գուշը բաւական սխալ էիք հասկանում ինձ և իմ բնաւորութեան թուլութեանն էիք վերագրում իմ չափազանց ներողամտութիւնն ու համբերութիւնը, որ իսկապէս ծագում էր իմ բարեխառութիւնից։ Այժմ փորձը պիտի սովորեցնէ ձեզ, որ եթէ իմ կամքը արտարայտւում է մի փոքր դանգաղութեամբ, սրա փոխարէն նա վերջ ի վերջով անքակտելի է»....

Այդպէս խիստ կերպով պատժուեց Կօնտը իւր չմտածած

ամուսնութեան համար: Նա արդէն 44 տարեկան էր, երբ բաժանուեց Կարօլինալից: Նա ալլ ևս հազիւ թէ կարողանար մտածել նոր բախտի, նոր սիրոյ վերար Փիլիսոփայական զբաղմունքները բոլորովին գրաւում էին նրան, և նա, գուցէ, մինչև անգամ ուրախ էր հանգստութեան և մէնակութեան համար, որ վերջիվերջոյ գտել էր: Ալժմ ոչ ապարդիւն անհանգստութիւնները և սրտնեղութիւնը, ոչ կասկածանքը, ոչ նախանձը, ոչ բազմաթիւ անտառորժութիւնները, որ ծագում էին առօրեալ մանր մունը անհամաձայնութիւններից, չէին կարող խանգարել նրա կեանքի խաղաղ ընթացքը: Նա ալժմ կարող է ամբողջովին նոուիրուել իւր կոչման:... Բայց աւազ, սիրատենչ սիրտը չէր կարող պարապ մնալ... Իւր կեանքի հինգերորդ տասնեակում նա սիրեց իսկական սիրով, սիրեց ալնպէս, որպէս միայն մէկ անգամ կարելի է սիրել ամբողջ կեանքում.....

Կլօտիլդան, Կօնտի սիրեցեալը, մի վերին աստիճանի անքախտ կին էր: Նա ամուսնացել էր, առանց նախապէս ճանաչելու, մի խարդախ մարդու հետ, որ շուտավ աքսորուեց տաժանտկիր աշխատանքների: Երեսնամեալ ամուսնացած, բայց անամուսին կինարմատը, որ գուրկ էր կենսական փորձառութիւնից, ոչ մի մասնաւոր պարապմունք չգիտէր, ինքն էլ հիւանդու, մնացել էր իւր աղքատ ծնողների ձեռքին: Նա բաւական գեղեցիկ էր, բարի ու քնքոյշ սիրտ և լուրինական խելք ունէր: Կօնտի հետ ծանօթանալով՝ նրա մէջ մինչև անգամ գրականական հակումն յայտնուեց, նրան առաջարկեցին գրել մի ամենօրեալ թերթի համար բանասիրականներ, մանկավարժութեան և վիպական քննութեանց մասին: Մի խօսքով՝ նա սովորական կին չէր: Կօնտը գտնում էր Կլօտիլդայի մէջ ալն բոլորը, ինչ որ նա 17 տարի իզուր որոնել էր Կարօլինալի մէջ: Միրոյ ծարաւ սիրտը վերջապէս գտել էր իւր արժանի հերոսուհուն: Բայց ալդ բոլորից ոչինչ չը գուրս եկաւ, Կլօտիլդան հիւանդ էր, թոքախտ էլ ստացաւ և կարճ ժամանակում մեռաւ: Բայց նրա սէրը միշտ վառ-

Եր Կօնտի սըտում, ազգում էր նրա մտքերի վերալ և նոյն իսկ չափազանցութիւնների հասցնում

ԿՕՆՏԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԵջ.

Մեծ հասարակագէտի բնորոշ յատկութիւններից մէկը այն էր, որ նա ոչ միայն սկզբունքներ էր մշակում, մտքեր էր արծարծում, ծրագիրներ էր կազմում, ալլև տնմիջապէս ժամանակցելով ընթացիկ կեանքին, ամենալին ջանք գործ էր դնում իւր սկզբունքները իրականացնելու համար։ Ուրեմն նա ոչ սասկ գիտնական էր, ալլև նոյնչափ եռանգուն հասարակական գործիչ։ Նրա հասարակական գործունէութեան մէջ նկատում է երկու ձգտում, որ միմեանց շարունակութիւնն են կազմում։ Նա նախ ձգտում էր իւր իսկ ձեռքով տարածել իւր սկզբունքները ժողովրդի մէջ, տպա աշխատում էր իւր սկզբունքներն արդէն դաւանողների օգնութեամբ կեանքի մէջ գործադրել նրանց, հասարակական մարմինը ձեսկերպել իւր սկզբունքների համեմատ։

1831 թուին Կօնտը սկսեց աստղաբաշխական մատչելի գասախօսութիւններ կարդալ ձրիաբար, որ շարունակեց մինչև 1848 թիւը։ Նա կարդում էր կիրակի օրերը և ալդպիսով բանուորներն էլ միջոց էին ունենում նրան լսելու։ Կօնտը կապում էր աստղաբաշխութիւնը միւս դրական գիտութիւնների հետ, արծարծում էր իւր կենսական գաղափարները և հէնց ալդ էր իսկապէս ունկնդիրներին դրաւողը։ Ինքը Կօնտն՝ էլ ի հարկէ ալդ իմանում էր։ Զուտ գիտական տեսութիւններից նա անցնում էր ժամանակակից հասարակական հարցերին։ Մանաւանդ ուշագրութիւն էր դարձնում կապիտալիզմի վրալ, խօսում էր այն մասին, թէ կառավարութիւնը պիտի հսկէ բանուորների և նրանց տէրերի յարաբերութեան վրալ։ Երկու անգամ դասախոսը շօշափեց ալնպիսի խնդիրներ, որ կառավարութեան առիթ տուեց մի-